Ֆրանկոֆոն Կարիերայի Թվային Կամպուսի (ՖԿԹԿ) համար կայքի նախագծում

Ձեռնարկության անունը՝ **ՀՖՀՀ**

Ծրագրի անունը՝ **ՖԿԹԿ**

Կոնտակտային անձ՝ **Ասյա Մովսիսյան**

Հասցե՝ **Դավիթ Անհաղթ 10**

Հեռ.՝ **+374 91 555072**

Էլ. փոստ՝ **asya.movsisyan@pers.ufar.am**

Կայքի նկարագրական բնութագրերը

1.1 – Կայքի դերը համալսարանի ռազմավարության մեջ

Տարիներ շարունակ «Անձնական և մասնագիտական նախագիծ» հատուկ դասընթացը, որն ուղեկցվում է ընկերություններ այցելություններով, օգնում է ՀՖՀՀ-ի ուսանողներին մասնագիտական ներգրավմանն ուղղված իրենց քայլերում: Այս դասընթացը և այս մոտեցումն արդեն տվել են իրենց արդյունքը՝ ապահովելով զբաղվածության ավելի բարձր մակարդակ մեր ուսանողների և շրջանավարտների համար: ՖԿԹԿ-ը ՀՖՀՀ-ին թույլ կտա ընդլայնել այս հաջողված փորձը՝ այն հասանելի դարձնելով ավելի լայն հանրության համար, հնարավորություն կտա առաջարկել առցանց վերապատրաստման դասընթացներ և այցելություններ COVID-19 համաճարակի հետ կապված առողջապահական սահմանափակումների երկարաձգման դեպքում, ինչպես նաև երկարատև դարձնել հարթակում տեղադրված ռեսուրսների օգտագործման հնարավորությունը:

ՖԿԹԿ-ի **գլխավոր նպատակն** է նպաստել «ֆրանկոֆոն կարիերայի» ստեղծմանը և զարգացմանը ցանկացած տարիքի, ցանկացած մասնագիտության համար և առանց աշխարհագրական սահմանափակումների: Հատուկ նպատակներն են.

- ✓ հանրայնացնել ֆրանկոֆոն կարիերայի տարբեր հնարավորությունները երկրում և նրա սահմաններից դուրս,
- ✓ օգնել ավելի ճիշտ ընտրել մասնագիտությունը՝ հիմնվելով մասնագիտական կողմնորոշման թեստերի վրա,
- ✓ օգնել ավելի «զինված» լինել աշխատաշուկայում՝ լավագույնս ներկայացնելով թեկնածությունը (Ինքնակենսագրություն, ուղեկցող նամակ և այլն) (անհատական աջակցություն),
- ✓ օգնել նախապատրաստվել աշխատանքի ընդունման հարցազրույցներին (անհատական աջակցություն),
- ✓ տարածել առկա ֆրանսախոս աշխատանքի առաջարկները տեղական և միջազգային շուկաներում՝ մանրամասներ ներկայացնելով թեկնածություն ներկայացնելու գործընթացի վերաբերյալ,
- ✓ նպաստել ֆրանկոֆոն կարիերայի զարգացմանը տեղական և միջազգային շուկաներում,
- ✓ նպաստել մասնագիտացված ֆրանսերենի գիտելիքների զարգացմանը՝ տարածաշրջանում և աշխարհում ֆրանկոֆոն կարիերայի հնարավորությունները շատացնելու նպատակով,

ինչպես նաև

- ✓ ավելի լավ տեսանելիություն ապահովել ՀՖՀՀ-ի համար,
- ✓ թույլ տալ գործընկեր ձեռնարկություններին ավելի հեշտությամբ թեկնածուներ գտնել նոր աշխատակիցներ հավաքագրելու համար՝ առաջարկելով նրանց որակյալ ինքնակենսագրական,
- ✓ նպաստել համալսարան-ձեռնարկություններ կապի ամրապնդմանը:

1.2 Կայքի հիմնական թիրախը

- ✓ ՀՖՀՀ ուսանողները և շրջանավարտները
- ✓ Հայկական և միջազգային ձեռնարկությունները
- ✓ Բոլոր ֆրանկոֆոնները

Նկատի ունենալով, որ ձեռնարկությունների մեծ մասի աշխատանքային լեզուն անգլերենն է, կայքը պետք է լինի բազմալեզու՝ հայերեն, ֆրանսերեն, անգլերեն:

1.3 Կայքի որակական և քանակական բնութագրիչները

- Որակական հատկանիշներ
  - ✓ սոցիալական ցանցերում կիսվելու հնարավորություն
  - ✓ Աշխատանքի վերջին առաջարկները՝ թերթվող տեղեկությունների տեսքով
  - ✓ շաբաթվա հրապարակումները պարունակող տեղեկատվական նամակի ավտոմատ ուղարկում
  - ✓ դասերի մեջ ներառված տեսանյութեր, լուսանկարներ, տեքստեր
- Օգտատերերի քանակը
  - ✓ 2000-2500 ուսանող(2025թ.-ին)
  - ✓ 5000+ շրջանավարտ (2025թ.-ին)
  - ✓ 150 + ձեռնարկություն
  - ✓ 1000 այլ

2 – Գործառնական և տեխնիկական ասպեկտները

2.1 - Կայքի կառուցվածքը

Կայքի հիմնական էջերը, հիմնական բաժինները և ենթաբաժինները



2.2 - Գործառնական նկարագիր

Օգտատերերը տեսնում են էջերը և գլուխների վերնագրերը, սակայն բուն տեղեկատվությունը հասանելի է միայն նույնականացում անցնելուց հետո:

Օգտատերերին հասանելի տեղեկատվությունը տարբեր է՝ կախված նույնականացման տեսակից (ուսանող, շրջանավարտ, ձեռնարկություն, այլ), յուրաքանչյուրը տեսնում է միայն իրեն վերաբերող տեղեկատվությունը:

Ուսանողները համալսարանից ստանում են «օգտանուն» և «գաղտնաբառ», որոնք այնուհետև կարող են փոփոխել: Նրանց **Պրոֆիլները** ներառում են Համալսարանի կողմից արդեն լրացված որոշ դաշտեր (մասնագիտություն, ուսման տարի), բայց նաև հնարավորություն ունեն **ավելացնելու դաշտեր** վերապատրաստման, հավաստագրերի, փորձի, հմտությունների համար:

Շրջանավարտների կայքում պրոֆիլներ ունեցող **Շրջանավարտները** և **ձեռնարկությունները** կարող են ուղղակիորեն մուտք գործել Կամպուսի կայք: **Ձեռնարկություններին** հասանելի կլինի աշխատանքի և պրակտիկայի իրենց առաջարկների դիտումների վիճակագրությունը:

«Այլ» տեսակի պրոֆիլները ամբողջությամբ լրացվում են ինքնուրույն (կրթություն, հավաստագրեր, փորձառություն, հմտություններ և այլն):

Պրոֆիլները բազմալեզու են:

Ո՞վ կարող է դիտել պրոֆիլները և պրոֆիլի որ հատվածն է տեսանելի:

Պրոֆիլ	Անուն/ազգանուն	Կրթություն (ներ)	Հավաստագիր (գրեր)	Փորձառություն	Հմտություններ	Անձնական տվյալներ
Այցելու						
Ուսանող						
Շրջանավարտ						
Ձեռնարկություն		X	X	X	X	
Կայքի մոդերատոր	X	X	X	X	X	X
Կայքի ադմինիստրատոր	X	X	X	X	X	X

Ձեռնարկությունները կարող են ստեղծել **միջոցառումներ** և **դասընթացներ**: «**Միջոցառման ստեղծումը**» կամ «**Դասընթացի ստեղծումը**» պահանջում է կայքի **Մոդերատորի** հաստատում: Օգտագործողները կարող են միանալ դասընթացներին առանց լրացուցիչ վավերացման:

2.2.1 Մասնագիտական ներգրավմանն ուղղված դասընթացներ

Առցանց դասընթացներ բաժինը ներառում է՝

- Մասնագիտական ներգրավմանն ուղղված դասընթաց: Առցանց դասընթացը տեղի է ունենում տարեկան 2 անգամ (??), դասընթացի մասերը կայքում հրապարակվում են շաբաթը մեկ անգամ: Դասընթացները պարունակում են բացատրական տեսանյութեր: Յուրաքանչյուրը **կարող է գրանցվել** դասընթացին, Մոդերատորը **հաստատում** է գրանցումը:
- Ձեռնարկությունների կողմից առաջարկվող առցանց դասընթացներ (սինխրոն կամ ասինխրոն) - դասընթացի տեսանյութերի տեղադրման հնարավորություն: Յուրաքանչյուրը **կարող է գրանցվել** դասընթացին, Մոդերատորը **հաստատում** է գրանցումը:

- Վիրտուալ այցելություններ ձեռնարկություններ – տեսանյութերի տեղադրման հնարավորություն:

Առերես դասընթացներ բաժինը ներառում է՝

- Մասնագիտական ներգրավմանն ուղղված դասընթաց: :
  - Դասընթացի նկարագիր (լուսանկարներ և տեսանյութեր ավելացնելու հնարավորություն),
  - Օրացույց և գրանցման հղում:

  Յուրաքանչյուրը **կարող է գրանցվել** դասընթացին, Մոդերատորը **հաստատում է** գրանցումը:
- Ընկերությունների կողմից առաջարկվող կարճաժամկետ դասընթացներ (դասընթացների լուսանկարների և տեսանյութերի տեղադրման հնարավորություն + օրացույց և **գրանցման հղում**):
- Այցելություններ ձեռնարկություններ (լուսանկարների և տեսանյութերի տեղադրման հնարավորություն + օրացույց և **գրանցման հղում**)

2.2.2 Անհատական աջակցություն մասնագիտական ներգրավման հարցում

Նկարագրություն + անհատական աջակցության հայտի ձև (ազգանուն / անուն / էլ. փոստ / կրթություն / հավաստագրեր / աջակցության ընտրություն ինքնակենսագրականի և / կամ ուղեկցող նամակի և / կամ աշխատանքի հարցազրույցի համար /ցանկալի ամսաթիվ):

2.2.3 Աշխատանքի և պրակտիկայի առաջարկներ

Պրակտիկայի, աշխատանքի և վերապատրաստման առաջարկները հրապարակվում են կայքի Մոդերատորի կողմից, հրապարակումը կատարվում է՝ նշելով հասանելիության հնարավորությունները (ուսանող, շրջանավարտ, ընկերություններ, այլ վանդակներ):